ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 15 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի

Ա. Խաչատրյանի

Քննության առնելով Մնացական Բարիկյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Մնացական Բարիկյանը 2017թ. հունվարի 31-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերությունը ճանաչել ՀՀ Սահմանադրության 10 և 60 հոդվածներին հակասող և անվավեր»:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ.

1. Դիմողը նշում է, որ ՀՀ վերաքննիչ դատարանի որոշմամբ իր կամքին հակառակ ինքը զրկվել է Երևան քաղաքի Ա. Վշտունու 2-րդ նրբանցքի թիվ 7 հասցեում գտնվող 565.90 քմ

ընդհանուր հողամասում գտնվող 44.50 քմ շինությունների նկատմամբ սեփականության իրավունքից՝ վիճարկվող դրույթի կիրառման արդյունքում:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող նորմն առաջացնում է իրավական անորոշություն և պայմաններ ստեղծում դրա կամայական և տարածական մեկնաբանման և կիրառման համար:

2. Դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի համար առաջացած հետևանքները պայմանավորված են ոչ թե նրա կողմից վիճարկվող հոդվածով կամ դրա վերաբերյալ ձևավորված իրավակիրառական պրակտիկայով, այլ կայացված համապատասխան դատական ակտերով: Մասնավորապես, դիմողի համար առաջացած հետևանքներն արդյունք են ՀՀ վերաքննիչ դատարանի այն եզրահանգումների, ըստ որոնց՝ «...Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2010 թվականի հուլիսի 14-ի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված է եղել անշարժ գույքը կողմերի միջև փաստացի առանձնացված լինելու հանգամանքը...», «...պահանջն ուղղված է ընդհանուր գույքից փաստացի տիրապետվող անշարժ գույքի առանձնացմանը, այլ ոչ թե ընդհանուր գույքից իրենց ½ մասը բնեղենով առանձնացնելուն...» և այլն, իսկ վիճարկվող դրույթը դիմողի նկատմամբ կիրառվել է որպես ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից արված եզրահանգումների հետևանք: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշմամբ սահմանված իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով: Հետևաբար, այս առումով առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

3. Դիմողի առաջ քաշած փաստարկներն առ այն, որ «...հաշվի առնելով իմ համար առաջացած ոչ բարենպաստ հանգամանքները, վիճարկվող նորմը որևէ կապ չունի անձին պատասխանատվության ենթարկելու, հետևաբար նաև՝ սեփականազրկման հետ...» կամ «... դիտարկվող գույքում իմ բաժինը էական է, ի ծնե բնակվել եմ այդ տանը, այսինքն՝ ընդհանուր գույքի նկատմամբ ունեմ էական շահ, հետևաբար՝ այդ մասով ևս վիճարկվող դրույթը չի կարող սեփականազրկման հիմք հանդիսանալ...» վկայում են, որ դիմողը փորձել է

հիմնավորել այն, որ խնդրո առարկա դրույթը սեփականազրկման հիմք չէ այն դեպքում, երբ սեփականազրկումը ենթադրում է սեփականության իրավունքի անհատույց դադարեցում, մինչդեռ վիճարկվող դրույթը ստեղծված անհամաչափությունը դրամական գումար վճարելու կամ այլ փոխհատուցման եղանակով հաղթահարելու նպատակ է հետապնդում, ցույց են տալիս, որ դիմողը չի պատկերացրել վիճարկվող նորմի բովանդակությունը, բավարար կերպով չի հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել և ի՞նչ է ակնկալում Սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում:

Անհատական դիմումին ներկայացվող պահանջներից է նաև այն, որ դիմողը պետք է պատշաճ ձևով հիմնավորի, թե իր կողմից վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաև հիմնավորի իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, պահանջներ, որոնք չպահպանելը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 6-րդ կետերով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Մնացական Բարիկյանի անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

15 փետրվարի 2017 թվականի
ՍԴԴԿՈ/2-3